

կրօնով Քրիստոնեայ, Մարերու սերունդ ու Ամատունի էր, Մենք դեռ չանցած այս վերջին պատմութեան՝ բունք մեր ամբողջումը:

— Հայը Մարերու հետ ունեցած շատ բաղխումներու մէջ առաւելագոյն եղած է յաղթական ու միլենոյն ժամանակ անոր բարեկամը. Մարը յաղթուած լինելով մէկտեղ Հայութիւնն է ընդգրկած, (բայ ի այն ծանր հանդամանքներէ՝ օրինակ դաւաճանութիւն և այլն, որոնց պատիժը շատ խստօրէն կը գործադրուէր):

### Հ Ա Յ Ո Ւ Կ — Ք Ի Ի Ր Գ Ե Ր Ը՝ Ի Կ Ի Լ Ի Կ Ի Ս.

ՈՒՐԻՇ ՀԱՅ — ՔԻԻՐԳԵՐ՝ Ի ՀԱՅԱՍՏԱՆ. ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՐԻՔԵ-  
ՐՈՒ ԵՒ ՔԻԻՐԳԵՐՈՒ ՄԷՋ. ՔԻԻՐԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:

Հատուած մը Ալիշանի Միտումնէն.

«Հայուկ — Քրդերը Կիլիկիայի մէջ անցեալին կը ներկայանն կարևոր բաժիններէն մէկը: Անոնք տարածուած են Անաւարդայ և Մասայ մէջ. Պօղան տոհմն ևս կը համարուի հայասեր՝ հատատուած Սև լեռան վրայ:

Քրդերը առանձնայատուկ տեղ կը գրաւեն Կիլիկիոյ պատմութեան մէջ, անոնք Հայերու նման եզեր են բնիկ ժողովուրդ Կիլիկիոյ, նոյնպէս ունեցեր են եկւոր գաղթականներ՝ թէև Կիլիկիոյ պատմութեան մէջ ոչ մի արժանաւոր տեղ չեն գրաւեր:

Հին ժամանակներէն և իններորդ դարու վերջերը Վասիլ Ա. կայսրի օրերուն, անոնք գոյութիւն ունեցեր են Տօրոսի լեռանց ամրութիւններուն մէջ, եկած էին և տասներկուերորդ դարու վերջերը (1187-96):

Հատ ատորի պատմիչ Միխայէլի, Քրդերը Միջագետքի սահմաններուն վրայ պատերազմելով Թիւրքերու հետ, իրենց ապատանը և ազատութիւնը գտած են ի Կիլիկիա՝ այնտեղ գրմելով: